Արձանագրություն h.4

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի 07.06.23 թ. կայացած նիստի:

Նիստին ներկա էր ԵՊՀ ռեկտոր Հ.Հովհաննիսյանը:
Նիստին ներկա էին գիտխորհրդի 40 անդամներից 28 -ը:
Նիստը նախագահում էր դեկանի տեղակալ, տ.գ.թ. Գ.Բարխուդարյանը

Օրակարգում՝

1. Առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորում:
2. Ընթացիկ հարցեր:

Նիստը ողջունեց ԵՊՀ ռեկտոր Հ.Հովհաննիսյանը: Նա հույս հայտնեց, որ ստեղծված իրավիճակը ֆակուլտետի կոլեկտիվը կհաղթահարի: Նա ասաց, որ ռեկտորատը ամեն կերպ աջակցում է ֆակուլտետի գործունեությանը և ամեն ինչ արվում է ի շահ ֆակուլտետի կոլեկտիվի և ուսանողության: Այնուհետև նա հաջողություն մաղթեց նիստի մասնակիցներին և հրաժեշտ տվեց :

Գ.Հայրապետյանն առաջարկեց ընթացիկ հարցերի շրջանակում լսել ֆակուլտետի դեկանի պաշտոնի հավակնորդ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Կառլեն Գագիկի Խաչատրյանի նախընտրական ծրագիրը:

Գ.Գալստյանն ասաց, որ դրա անհրաժեշտությունը չկա, որովհետև եթե հավակնորդի թեկնածությունը չհաստատվի, անիմաստ կդառնա այդ առաջարկը: Որոշեցին բաց քվեարկություն անցկացնել: Գ.Հայրապետյանի առաջարկին կողմ քվեարկեցին նիստին ներկա գտնվող 28 անդամներից 19-ը, դեմ՝ 8-ը, ձեռնպահ՝ 1-ը:

Որոշեցին ընթացիկ հարցերի մեջ ներառել Կ.Գ.Խաչատրյանի ծրագրային դրույթների ներկայացումը:

Առաջին հարցի վերաբերյալ զեկուցեցին ամբիոնների վարիչները, ովքեր ներկայացրեցին իրենց ամբիոնների առկա ասպիրանտների ատեստավորման արդյունքները: Չատեստավորվածներ չկան:

Որոշեցին հաստատել ամբիոնների որոշումները: Ատեստավորման մասին քաղվածքները՝ ամեն մի ասպիրանտի համար առանձին, ուղարկվում է ասպիրանտուրայի բաժին, 2-րդ օրինակն էլ պահվում է ֆակուլտետում:

Ընթացիկ հարցերի շրջանակում լսեցին՝

1. <<Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների>> ամբիոնի վարիչ, տ.գ.թ., պրոֆեսոր Գագիկ Սերյոժայի Գալստյանի և նույն ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու Հասմիկ Գառնիկի Մարգարյանի <<Տնտեսագիտության ձեռնարկ՝Մակրոտնտեսագիտություն>> աշխատությունը հրատարակման երաշխավորելու մասին հարցը:

   Արտահայտվեցին ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, տ.գ.թ., դոցենտ Կ.Գ.Խաչատրյանը, <<Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների>> ամբիոնի վարիչ, տ.գ.թ., պրոֆեսոր Գ.Ս.Գալստյանը,

   Որոշեցին, հիմք ունենալով <<Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների>> ամբիոնի 05.06.23թ. տեղի ունեցած նիստի որոշումը և ֆակուլտետի գիտական խորհրդի նիստում հնչած կարծիքները, վերոնշյալ աշխատությունը երաշխավորել հրատարակման որպես ուսումնական ձեռնարկ:

2. Իր ծրագրային դրույթները ներկայացրեց դեկանի պաշտոնի հավակնորդ, տ.գ.թ., դոցենտ Կ.Գ.Խաչատրյանը: Նա իրավիճակային վերլուծության հիման վրա նախանշեց ֆակուլտետի հետագա զարգացման տեսլականները:

3. Որոշեցին վերահաստատել առկա ուսուցմամբ ասպիրանտ,Մերի Փանոսյանի ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ <<<Հարկային համակարգի զարգացման տնտեսական ու սոցիալական հիմնախնդիրները ՀՀ-ում>>:

Գիտխորհրդի նիստի նախագահող,
դեկանի տեղակալ, տ.գ.թ. Գ.Ա.Բարխուդարյան

Գիտխորհրդի քարտուղար
տ.գ.թ., պրոֆեսոր Ա.Հ.Համբարձումյան